

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԳՈՒԼԻՍԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՁԵՌԱԴՐԵՐԸ.

(Շարունակութիւն)

Թ. 18.

Աւետարան (Թղթ. բու. ԹԼԿ. ԳՐԶ. ՊԷ)

1բ ԹՎ. Ռ՜ ՄԼԸ գեղատեմբեր ՚Բ

որ ես առդպեցի ուստայ ավաք այս աւետարանս առի
ի ձեռաց անօրինաց հալալ արդեանց իմոց և ետու յիշատակ
ինձ և իմ ծնողաց իմոց յակօրի ապրակ եղպարց իմոց շերվա-
նին և հարապետին որդոցն յակօրին շերվանին հարապետին
կողացուն համասփռուսին դատերացն ապրակին և նսնադուլին
և հանգուցեալ նախշունին և իւր էմասն ննջեցելոցն որ ետու
յիշատակ ի դուռն սբ Թոմայի առաքելուն յիշատ և արդա-
րոցն օրհնութիւնք եղիցի օվ ով որ ընդերցեն մէկ բերան հայր
մեղայիւ յիշեոցեն ինձ և իմ ծնողացն ամէն հայր մեր ամէն:

Ժամանեայ մեղ օղնութուն

դիյ մի մացուք ի փորցութուն

Թէպէտ մարմնօվ լինիլ ի քուն

այլ միշտ լիցուք հոքով արթուն

գրեցաւ այս ոտանավորէս բաղդենց գեղորբի փեսայ մեղաւոր
ավաքէս ով որ կարդայ մէկ բերան ողորմի յիշէ հայր մեր որ

2ա Արդ գլերջին ստացող սբ աւետարանիս ուստայ
շեխին որ հալալ ընչիցն իւրոյ յիշատակ իւրն և իւր ծնաւ-
դացն. հաւրն իւրոյ դաւթին և մաւրն դաւհրային և կողակցին
իւրոյ սօլթանին և որդոյն սփանիսին և ա՜մ յարեան մերձա-
ւորացն. նորոգեցաւ սայ ի դուռն սբ սիոնին և սբ յակօ-
րին ի Թգրութե՜ն ն սօլթան մուրատ խանին ի հայրապետու-
թե՜ն ա՜ն էջմիածնայ տբ մէլիքսէթ կաթղիսին ի առաջնոր-
դութե՜ն սբ Թումայի առաքելոյ արթուոյն տբ աւետիսին
ի ք՜հնյ սբ սիոնի և սբ յակօրի մէջի փողոյ տբ մեսրո-
բին քղըհեցի. և մեղաւոր անարժան ոհան կաղմողի Ով սբ բբ
մանկունք եկեղէցոյ ողք հանդիպիք սմայ կարդալով կամ օրի-

Նաեկելով յիշեց'' ք ուստայ շեխին հանդերձ ծնողքն ամէն
Թվ. ՈՒԲ. Նորոգեցաւ:

83^ա Քո որդի այ. ճշմարիտ ա՞ծ քո սք ա՞ծ ծախաւս
աւետարանի բարեխաւսութ՞քս: Ողորմեա ստացողի սորա թանկ
խաթունի. և ծնաւդացն նորա. և յովանիսի առն նորա. և ամ
արեան մերձաւորացն. և ասուք փոխարէն զպարգևս բարիս:
և քեզ փառք յաւիտ''.

133^ա Արդ զվերջին ըստացող սք աւետարանիս զբարեմիտ
և զա՞ծասէր կինն զհերիքնաղն որ նորոգել ետ յիշատակ հոգ-
ւոյ իւրո և իւր ծնողացն հօրն իւրոյ խուդավերդուն և մա. րն
իւրս մելիք աղին և իւր որդոցն մուրատին. և յակորին. և այլ
ազգահանացն. և որք հանդիպիք սմա լիաբերան ա՞ծ ողորմի
ասացէք զբարեմիտ կնոջն հէրիքնաղին և իւր ծնողացն ամէն:
Նորոգեցաւ սք աւետարանս ի թաղաւորութեանն բարոյց
փոքու շահապաղին ի կաթողիկոսութե՞ն ի Եջմիածնա տէ՞ն փի-
լիպպոսի. ի յառաջնորդութե՞ն ի Թումաի սք ուխտին զխաշա-
տուր անք եպսկոպոսն Նորոգեցաւ. Թվին. Ռ. Ճ. և երկու.
ձեռամբ յողնամեղ սիմոն իրիցոյ. և զիս զբաղմամեղս յիշել
ազաչեմ և գուք յիշեալ լիջիք ի ք՞սէ: ամէն:

270^բ Փառք ամենասք երրորդութե ն հաւր և որդոյ
և ճշմարիտ սք հոգոյն ամէն:

Ննորհու տէ՞ն այ իմոյ սկտայ և ողորմութ ք նորին աւ-
տարեցի զսք աւետարանս որ է բանն ա՞ծային. և ամենայն
տնաւրէնութ՞ին ք՞ի: Եւ իմով տկարացեալ բնութքս բաղմա-
մեղ և անարժան սուտանուն կարապետ կրաւնաւորի գրեցի
զսա ի Թուարբերութե՞ս հայոց. յութհարիւրերորդի. Եւթնե-
րորդի'' զոր ա ծասէր և հաւատարիմ կին սմն անուն թանկ-
խաթուն. յոյժ փափագմամբ սրաիւ, ստացաւ զսք աւետա-
րանս ի հալալ արդեանց իւրոց յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւ-
դացն դաւթի և հայոցի. և եղբարցն և ամ ազգահանացն. Արդ
ազաչեմ զամենեւեան որք հանդիպիք և տւղաիք ի սմանէ յի-
շեցէք ի սք յաղաւթս ձեր զստացող սորա զթանց խաթունն
և զծնաւդսն. և զայրն նորա զյովաննէս: Ընդ նոսին և զանյի-
շելի գրիչս զկար. և զմեր ծնողսն. և զեղբարսն: և զղաքարիայ
ծաղկող: և ք՞ս ա՞ծ որ տուողն է ի տուրս ձեզ և մեզ ողոր-
մեոցի և նմա փառք յաւիտեանս. ամէն:

թ. 21.

ԱԼԵՏԱՐԱՆ.

16×13×8. ԿՀԿ. ԹՂԹ. ԲԼԲԲ. ԹԼԿ. ԳՐԶԹ. 22 (=770; 1321). ԳՐԹ. տեղ ?, ԳՐԵԶ՝ Պողոս վարդապետ.

Կազմը հասաատուն, գործածութիւնից բաւական կեղտոտած ու մոշուած. գրութիւնն հասարակ բայց դիւրընթեռնի: Պատկերներ միայն 4 աւետարանիչների, խիտ անճաշակ. դըրուագներն ու զարդերը նոյնպէս, մասամբ ևս խոնաւութիւնից վնասուած: Թանաք՝ սե, կարմիր, կապոյտ, դեղին, ոսկեղօծ: Սկզբում համեմատական տախտակ 4 աւետարանների:

Ուղղագրութիւն—«եթե», «ընդ ենուլ», «իշւոյ».

Պակասում է շնացած կնոջ պատմութիւնը:

Յիշատակարան.

103ա «Զվերջին ստացողս զմկրտիչս յեանեալս յամ բարեաց: Ո՞վ պատկերադողը և ընթերցողք ս բ աւետարանիս: յերեսանկեալ աղաչեմ զձեզ մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ և ծնաւդաց իմոց և ողորմածն ա՜ժ մեզ և ձեզ ողորմեսցի:»

103բ «ԱԼԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱԹԷՈՍԻ գրեցաւ. չ, Հ. Թ վիս, ի յերկիրս վայու ձորու:»

268բ «Իսկ արդ որք ա՜ժ ծային սիրոյն հետեւեալ փափագեալ խորհին յաւրէնս տ ն գնալով զցայք և զցերէկ բարեպաշտութ՜ք և ողորմութ՜ք միշտ և հանապաղ: Ըստ նմին աւրինակի և սրբասնեալ և ուղղափառ, քաջ և արի յաղթող քահանայս գրիգոր անուն կոչեցեալ առեալ զս՞ք աւետարանս ի հալալ յարդեան իւրոյ, յիշատակ իւր և կենակցին իւրոյ սիմիկին և ա՜ժ մերձաւորաց իւրոց և ի վայելումն որդոյ իւր սէթեկայ և յորդանանու. և ոչ եղև կատարեալ սիրոյ իւրոյ սէթեկայ ելանել ի կննցադոս, աղայ մանուկ կենաւք. և եթող սուգ մեծ և դառն կսկիծ հաւր և մար և եղբաւր իւրոյ:

Սս գրիգորս տուի իմ սրտի յաւժարութ՜ք զս՞ք աւետարանս գաղիտոյ ս՞ք գերգին գրիգոր արեղի ձեռամբն իմ որդւոյն սեթեկին հոգոյն յիշատակ. որ քանի աւետարանս կենդանի է յեկեղեցոյն դռանն տարենն: ՚ք աւր ժամ կատարեն. մի աւրն քառասնից տօնին: Հարաթ աւրն սպասաւորք ս բ գերգին անխափան կատարեն կատարողքն ահին յայ: Այլ յանդգնի ի հանել ջանայ յեկեղեցոյն գրաւէ կամ ծախէ կամ գողանայ, զվարձքն յուղայի առնու և զկայենին և զխաչահանուացն ք՞սի և ոչ լինի թողութիւն և փրկութիւն ոչ աստ և

որ ի հանդերձելումն. ես գրեգոր արեղէս վկայ: ես բողէգոս վկայ: ես Գերգոս վկայ: ի թ վ. շղէ. ես ստեփանոս արեղէս որ զգիրս գրեցի վկայեմ.»

343բ «Փառք անեղի եռահիւսակ և միասնական ս՞ք երրորդութեանն որ ես զաւրո թի տկարութե՞ս մերում հասանել ի վերջ ս ք աւետարանիս. Արդ գրեցաւ ս՞ք աւետարանս ձեռամբ պաւղոս, վ՞րդ յաղագոս խնդրոս սրբասէր կրաւնաւորի սահակ անուէն, որ ստացաւ զսոյ ի յարդար և ի խալալ վաստակոյ իւրոց յիշատակ իւր և ծնաւդաց իւրոց և եղբարց իւրոց. որք աւիտիք ի սմանէ (Շաբուճակութիւնք, Լաջորդ երեսի վրայ պակասում է)

344ա «Զվերջին ստացող ս՞ք աւետարանիս, Զս՞ծասէր, և սրբամիտ, կրաւնաւորն, զտէր մարգարէն: Որ ստացաւ զս ք աւետարանս, ի հալալ յարգեանց իւրոց. Յիշատակ իւր և ծնաւդացն իւրոց, տէր Յովաննիսին, և թուրւանդին, և եղբաւր սրապիոնին, և քրւերցն Մարինոսին, և մամա խաթուէնին: Եւ հաւր եղբար որդոցն, տէր, վարդանին, նիկաւդայոսին, Յակոբին, Յովաննիսին, և դրսաւերն, նուբարին: Եւ միւս հաւրեղբաւրն, Մարտիրոսին, և որդոցն, Խլղաթին, և Ռաշաւին, ևւ միւս հաւրեղբաւրն, աղաբէկուէն, և որդոցն, Յոհաննիսին, և Փիլիքիւնին, և այլ ամենայն արեան մերձաւորաց նոցին ամէն»:

344բ «Նարձեալ յիշեցէք ի ք ս զառաջ յիշեցեալսն տէր մարգարէն. և զծնաւդքն իւր. զտէր Յովաննէսն, և թուրւանդէն. և զեղբարքն զսրապիոն, և զհանդուցեալն. զգրեգորն, և զքուրքն, զմարինոս, և զմամախաթուէն, և զհանդուցեալքն: զխալաֆն, և զէթարն, զս ք մարգարի եղբարն զսրապիոն. և զսրապիոնի որդիքն, զովանէսն, և զգրեգորն: և զտ՞ք մարգարի հաւրեղբարն, զմարտիրոսն, և զորդիքն, զխլղաթն, և զռաշաւն: և զմիւս հաւրեղբարն, զաղուբէկ, և զորդիք, զյոհաննէսն, և զփիլիքիւն, և միւս հորեղբաւր որդիքն, զտ՞ք վարդան: զնիկաւդայոսն, զյակոբ, զյոհաննէա, և զուստրն զնուբարն, և զայլ ա՞մ» (Շաբուճակութիւնք, Լաջորդ երեսի վրայ, պակասում է):

345ա «Վերջի ստացողին ս՞ք աւետարանիս. քուէս քնդրեան, և իւր եղբար կարապետ և հանկուցեալ եղբարն կիրակոսն և նեկ՞դոսն և որդին զուլիշան: և մարն թուրվանին իւր հարսին շահումին և որդուէն մարգարանց քնդրասի եղբաւրն զստերն էմին և յեղիսին աւետարա(ն)ի կարգացող զքնդրասին ողորմի ասացէք. տարուէն ա (=1) ժամ, անէք.»

345բ «Ես մեղաւոր տ՞ք ներսէս ամէնին հող դառն արատաւք յերկիր շրջող շարաց սիրող քարեաց ատող, որ սմայ

եղէ՛ դու՛ ծոց, Զքեզ ազաշեմ ով հարգացող. ողորմոյ ես եմ հայցողին և թողութիւն ու լեր խնդրող զի ա՛ր լիցի քեզ պարգևող: Թ՛վ. 4. ր:»

«Տէր աստուծոյ, եղիտո. բաղասար, խանում, մ՛ըկշ, մ՛ըտս, վ՛դն. խ՛ռոյ, դիւր՛քէկ, դ, որդին փերեջն, , քյրեջ».

Թ. 22.

ԱԵՏԱՐԱՆ (Թղթ. բու. Թւկ. գրչ. Թ. Ճ. Խ. Թ).

1^ա Դարձե՛ւ յիշեցէք և ա՛ծ ողորմի ասացէք փանսոին որդոյն մէլքեւթին մաւրադին աւրոյնամին հողացոյն հանումին ծնաւդաց էթարին գ՛ըդին հող՛ն մըմաթին որդոյն հաղարին մէլքեւթին հող՛հցոյն յամասին որդոյն դաղարին մի՛ղին Վիքայէլին յովանէսին աւադին աղսուն. աւրահամին Էդաւին գնայտիտին քվերն թաւրվանդ և իւր որդոյն աւէտին մէլքոյնին աղասուն գեղծունին աննային. ա՛ծ լուսաւորէ զիւր՛ց հագին: Դ՛ըձ՛ւ հրկին անդամ ա՛ծ ողորմի ասացէք մէլքեւթին հօրն փանսսին. մամոււն գիւլադին որդոյն մաւր՛տին: Ես մէլքեւթ և Եղբարն մաւրատ միաբանեցանք գնեցինք զնասրի արտ և ռիֆ (անշո. շա վաղֆ 𐎠𐎼𐎫) արեւք ս՛ը կիարոսի զօրավարին մարդոյ դաւի շհայ ինչ մարդ դաւի անէ նա զնէճքն յուգին առցէ և զխաշխանողացն: Ես արբահ՛մ և Եղբարքս մեր միայն. և գնեցինք զս՛ը աւետարն ձեռ՛մք ա՛ր. մէլքեւթին ա՛ր գը՛դին աւետ՛ընս կեան ի գիւղն կնդանց ի դուռն ս՛ը կիրակոսի զօրավին մեր հալալ մալն է մարդո դաւի շհայ մեր հալալ մալն է ինչ մարդ դաւի անէ կամ ծահէ կամ գրաւէ կամ հեռացուցանէ կամ ալ ու ալ անէ նա ինքն անիծած կենա մինչև ի մահ:

279^ր զրեց աւետարանս ի Թւին. Թ. Ճ. ԽԹ ամին կենա աւետարանս ի գիւղն կնդանց:

Թ. 23.

ԱԵՏԱՐԱՆ (Թղթ. բու. Թւկ. գրչ. ՊՀէ).

1^ա Նորհօրն՛ք ի ես յադուլիցի խաթուն պէկս . . . եմ հողակ գրիդոր կին. ասացա զս՛ը աւետարանս և եղի ի ս՛ը սիօնս որ կոչի ս՛ը յովանէս,

յիշատակ ինձ և որդոյն իմոյ կար' պետին: և ծնողացն իմոց:
և որք իշխեսցէ ի դրանէ սորին հանել և կամ վաճառել յի-
մոցն և կամ ի յօտարաց և որք յանդքնին դրաժակն յուզայի
արբցեն և զպատիժն կայենի առցեն: ամէն. և զիցի: և զիցի:

342բ Փառք անսկզբնականին հաւք և որդոյ նորա միածնի

.
Շնորհիւ ամենակալին ա՜յ և ողորմութե՞ք սորին, և դորժակ-
ցութե՞ք ս՞ք հողոյն. յանգ ելեալ աւարտեցաւ ս՞ք աւետա-
րանս. ձեռամբ յոգնամեղ և փցուն գրչի և զիւրջի որ անուամբ
կոչիմ արեղայ և ոչ դորժով: աշխարհաւ յաղվանից և տեղեաւ
գիղակեցի և գեղաւ հատրուղեցի Գրեցաւ ս՞ք մատեանս ի յա-
նապատիս որ կոչի ճգնաւորի քար ընդ հովանեաւ ս՞ք ա՜մսած-
նիս որ եմուտ ի քաղաքս եղեգիս: ընկերակից մեր ա՜ք սար-
գիս կուսահրաւն և ճգնաղգաց ՚ս. . . ընդ իս քահանայիս . . .
է պատճառ մեղ հանդուտեան աշոմ դառն ժամանակիս ան-
փորձ և անստամն պահեսցէ զսոս ք՞ս ա՜ծ յօյսմ կենցաղիս
և յետ ստեալցս ընդ ճշմարիտ քահանայիցն լիցի դատակից և
պատակից:

Դարձեալ աղաչեմ զձեզ զծնողս իմ ըստ մօրմնոյ զայրն
իմ զմէսար և զեղբայրն իմ զՋէսար և զա՜մ արեան մերձա-
ւորս իմ յիշել ի ա՜ք և ա՜ծ զձեզ յիշէ ի բարին ամէն: Դար-
ձեալ աղաչեմ զձեզ հանդիպողք սորին զվարպեան իմ զա՜ք
յաթանաս յիշել ի մարբափայլ յաղաւթս ձեր և զմեղսապարտ
գրիչս որ յետ սակաւ ժամանակաց ձեռս իմ հողանայ և մաղ-
թանք իմ առ ձեզ մնայ. այն որ առատն է ի տուրս բարե-
աց մեզ յերոցս (յիշեցելոյս) և ձեզ յիշողացդ առհասարակ
ողորմեսցի ի միւսանդամ գալստեանն իւրոյ ամէն: Եթ՛վիս
հայոց պ՛հէ:

344ա Փառք ա մ երրորդութե՞ք հաւք և որդոյ հողոյ ս՞րոյ
Կախաւն ամենակալին ա՜յ ևս ըստասկէսս գնեցի զաւետա-
րանս հալալ ինչից իմոց յիշատակ իմ և ծն . . .
իմոց հա . . . կար . . .
 . . . զերեք . . .
մուրա . . .
 . . .
էն մէլիք . . . ուսին մարու
 . . . ալէքսանոս . . .
 . . . մարտիրոսն: Սյլ և ամուսին իմ շի-
րազն և դստերք իմ նուկ . . . ն և մարգարիտն . . .
 . . . խպիւր . . .

նա կեղտով
ի թվականին 246.

344թ. Նա հեկադադէս աւետարանս տվի տէր դաւիթին
էլ ինչ որ բան չիլի ես տէր վլաս վկայ ոհանես արեղէս:

(շարունակելի)

Մես. վարդ. Մախուդեան.

ԱՆԻԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԸ

Շարունակութիւն

III.

Այժմ Անին ներկայանում է անբնակ աւերակ, ձգուած
անկանոն մի եռանկիւնի տարածութեան վերայ, որ 150
դեսիատինից աւելի է: Եթէ մօտենանք Անիին հիւսիսային
կողմից, նա մի քիչ հեռուից՝ չի թողնում այն բոլորովին
ամայութեան տալաւորութիւնը՝ որպիսին համակում է քա-
ղաք մանողին: Բարձր, մի ժամանակ ահարկու քաղաքային
պարիսպները մասամբ թաքցնում են քաղաքի ներքինը:

Այդ պարիսպները կոչւում են Սմբատեան և նրանց
կառուցումն վերադրւում է Սմբատ Բ.-ին: Բայց նրանք
չեն մնացել իրանց սկզնական դրութեամբ: Սմբատ թա-
ղաւորի պարիսպները, ժամանակի ընթացքում, միշտ նո-
րոգուել են, թանձրացել են, և շատացել է աշտարակների
թիւը: Տեղտեղ, ուր պարիսպների երեսաքարերը թա-
փոււել են, տեսանելի է աւելի հին շարուածքը, և այդպէս
երբեմն երևան են դալիս երեք և մինչև անգամ չորս շերտ
երեսաշարք: Սմբատեան պարիսպները, որպէս և Անիի բո-
լոր միւս յիշատակարանները, դերազանցում են նրբու-
թեամբ և ուղղանկիւն, ողորկ տաշուած ու խիտ դասաւոր-
ուած քարերի կանոնաւոր շարուածքով: Պարսպի գոյնը
աւելի կենդանացնելու համար շարուածքի մէջ տեղտեղ
գործադրուած են բացի դեղնագոյն քարերից՝ կարմիր և
սև քարեր, որ սովորական են Անիի միւս շինութիւնների